ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ ՀԱՆՁՆԵՑ ԿՐՈՆԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻՆ

Կիրակի, փետրվարի 2-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը վկայագրեր հանձնեց 2002 թվականին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Տեղեկատվական Համակարգի կազմակերպած կրոնական դասընթացին մասնակից լրագրողներին:

Հայաստանի լրատվական տարբեր միջոցներ ներկայացնող 22 լրագրողներ հուլիս-նոյեմբեր ամիսներին առիթ ունեցան ունկնդրելու դասախոսություններ Ս. Գրքի, Հայ Եկեղեցու պատմության, վարդապետության, ծիսագիտության, էկումենիկ շարժման վերաբերյալ, ծանոթացան կրթական և սոցիալական ոլորտներում Մայր Աթոռի գործունեությանը: Լրագրողները այցելեցին նաև Հայաստանի տարբեր թեմեր և վանքեր:

Ողջունելով լրագրողներին՝ Վեհափառ Հայրապետը կարևորեց դասընթացի նշանակությունը և հույս հայտնեց, որ այն շարունակություն և բարի ընթացք կունենա նաև հետագայում:

«Այս դասընթացի շնորհիվ ամբողջականորեն կճանաչեք Հայ Եկեղեցին ու նրա կյանքը, նրա առջև ծառացած բոլոր խնդիրները»,- ասաց Վեհափառ Հայրապետը՝ մաղթելով լրագրողներին բեղմնավոր գրիչ՝ հայրենական կյանքը լուսաբանելու, հայ ժողովրդին բարու և սիրո մեջ առաջնորդելու գործում: